ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան
համայնք, Բաղրամյան 26, Հեռ. 2-4393 , Ֆաքս 2-44-45 ,

N 59
07 մայիս 2014թ.

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ս. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ.

Կից ուղարկվում է Ապարանի քաղաքային համայնքի ավագանու 2014 թ ապրիլի 30-ի նիստի թիվ 18-Ա, 19-Ա, 20-Ա, 21-Ա, 22-Ա, 23-Ա, 24-Ա, 25-Ա, 26-Ա, 27-Ա որոշումները:
Առդիր՝ 14 էջ:

07.05.2014

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

ՕՐԱԿԱՐԳ

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ, 30. 04. 2014 թ.

1. **Ապարանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի 2013 թ գործունեության արդյունքների մասին**

/զեկ. Ռ. Հարությունյան/

2. **Ապարանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքներ աճուրդ-վաճառքով օտարելու համար թույլտվություն տալու մասին**

/զեկ. Լ. Սարգսյան/

3. **Ապարանի քաղաքային համայնքի հողային հաշվեկշռում անհայտ քաղաքացու անվամբ հաշվառված հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին**

/զեկ. Լ. Սարգսյան/

4. **Ապարան քաղաքի բնակիչ Ֆրիկ Հովհաննիսյանի հողի հարկի տույժը զիջելու մասին**

/զեկ. Վ. Միքայելյան.

5. **Ապարան քաղաքի բնակիչ Մուխայել Բարսեղյանի հողի հարկի տույժը զիջելու մասին**

/զեկ. Վ. Միքայելյան.

6. **Ապարան քաղաքի բնակիչ Դավիթ Մկրտչյանի հողի հարկի տույժը զիջելու մասին**

/զեկ. Վ. Միքայելյան.

7. **Ապարան քաղաքի բնակիչԳևորգ Պողոսյանի հողի հարկի և գույքահարկի տույժերը զիջելու մասին**

/զեկ. Վ. Միքայելյան.

8. **Ապարան քաղաքի բնակիչ Լևիկ Հակոբյանի գույքահարկը զիջելու մասին**

/զեկ. Վ. Միքայելյան.

9. **Ապարան քաղաքի բնակիչ Սևակ Ղազարյանի գույքահարկը զիջելու մասին**

/զեկ. Վ. Միքայելյան.

10. **Գույքի խոտանման և դուրս գրման մասին**

/զեկ. Վ. Միքայելյան.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.apara.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԱՊՐԻԼԻ 2014 Թ N 18 - Ա

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ 2013 Թ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ << Ներքին աուդիտի>> մասին օրենքի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. փետրվարի 17-ի թիվ 143-ն հրամանի պահանջները և Ապարանի քաղաքապետի կողմից հաստատված 2013-2014թթ ռազմավարական ու 2013թ. տարեկան ծրագրերով, ներքին աուդիտի բաժնի կողմից 2013 թ
և 2014 թ առաջին եռամսյակում աուդիտ է իրականացվել համայնքային ենթակայության 8 ՀՈԱԿ-ներում՝ ֆինանսատնտեսական, իրավա-կազմակերպչական և ուսումնադաստիարակչական գործունեության, ինչպես նաև՝ քաղաքապետարանի աշխատակազմում՝ տեղական հարկերի և տուրքերի հավաքագրման ուղղությամբ տարվող աշխատանքների վերաբերյալ:
ՈՒսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված խախտումների, թերությունների ու բացթողումների վերացման ուղղությամբ հաստատված գործողությունների ծրագիրը հետևողականորեն իրականացվում է:
Վատնման, յուրացման և չարաշահումների փաստեր չեն հայտնաբերվել:
Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ապարանի քաղաքապետարանի ներքին աուդիտի բաժնի 2013 թվականի տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելված N 1-ի:

2. Հանձնարարել ներքին աուդիտի բաժնին (Ռ.Հարությունյան)՝
ավելի բարձրացնել ներքին աուդիտի իրականացման արդյունավետությունը, ապահովել ուսումնասիրությունների անհրաժեշտ խորություն ու բազմակողմանիություն, աուդիտի ընթացքին ներգրավել անհրաժեշտ մասնագետներ, աուդիտի ընթացքում բացահայտումների վերացման ուղղությամբ գործողությունների ծրագիր նկատմամբ հանդես բերել առավել հետևողականություն և պահանջկոտություն
3. Քաղաքապետին՝ ապահովել աուդիտի գործունեության դերի ու արդյունավետության բարձրացումը, ուժեղացնել հսկողությունը կատարված ուսումնասիրությունների ընթացքում բացահայտված խախտումների ու բացթողումների վերացման ուղղությամբ, ձեռնարկել անհրաժեշտ և ավելի արդյունավետ միջոցներ հետագայում դրանք իսպառ բացառելու համար:

ԱՎԱԳԱՆԻ՝ *Կողմ՝ (6)* *Դեմ՝(0)* *Ձեռնապահ՝(0)*

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արկադի Կարապետյան
Արսեն Պողոսյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

Հավելված N 1

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում Ապարանի քաղաքապետարանի ներքին աուդիտի բաժինը իր գործունեությունն իրականացրել է <<ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքին, ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-ն հրամանի պահանջներին, ներքին աուդիտի բաժնի ռազմավարական և տարեկան ծրագրերին համապատասխան:

Համաձայն ներքին աուդիտի 2013 թվականի տարեկան ծրագրի, աուդիտ է իրականացվել 8 ՀՈԱԿ-ներում՝ ֆինանսատնտեսական, իրավա-կազմակերպչական և ուսումնադաստիարակչական գործունեության, ինչպես նաև՝ քաղաքապետարանի աշխատակազմում՝ տեղական հարկերի և տուրքերի հավաքագրման դրվածքի ուղղությամբ :

ՀՈԱԿ-ներում և աշխատակազմում իրականացված աուդիտը նպատակաուղղված է եղել համակարգի 2012 թ ամբողջ գործունեության ուսումնասիրությանը և գնահատմանը: ՈՒսումնասիրություններին մասնակից են դարձվել նաև առանձին մասնագետների:

Աուդիտի ուսումնասիրությունների արդյունքները, դրանց հիման վրա կազմված գնահատումները, ըստ կազմակերպությունների, ներկայացվել են քաղաքապետին:

Աուդիտի ընթացքում կազմակերպություններում ստուգվել և ուսումնասիրվել են նրանց գործունեության հետևյալ աշխատանքները, հայտնաբերվել են հետևյալ թերություններն ու բացթողումները՝

1.Մանկապատանեական մարզադպրոց ՀՈԱԿ-ում իրականացվել է ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն, ուսումնասիրվել է գնումների գործընթացը , ստուգվել են հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների արժանահավատությունը, ծախսերի նախահաշվի, հաստիքացուցակի և կնքված աշխատանքային պայմանագրերի առկայությունը, գործող խմբերում ընդգրկված երեխաների անձնական գործերը և պահանջվող փաստաթղթերի առկայությունը, գործող խմբերում պարապմունքների դրվածքը և հաճախելիությունը, աշխատողների աշխատանքի հաճախումների հաշվառումը և ներքին կանոնակարգի կիրառման դրվածքը:
Արձանագրված խախտումների համար քաղաքապետի կողմից 2 մարզիչներ ազատվել են աշխատանքից, տնօրենը և ուսմասվարը ենթարկվել կարգապահական տույժերի:
ՈՒսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ դպրոցում պատշաճ մակարդակի վրա չի գտնվում աշխատանքային կարգապահությունը, որոշ խմբերում պարապմունքները հաճախակի ձախողվել են, այդ խմբերում ընդգրկված որոշ սաներ հրամանագրված չեն եղել, դասամատյանները լրացվում են թերություններով, 2009թվականից հիմնական միջոցների մաշվածություն չի հաշվարկվել: Խմբերում ցածր է երեխաների ընդգրկվածությունը, բավարար մակարդակի վրա չի մարզիչների աշխատանքը և արդյունավետությունը:

2.Մանկապատանեական ստեղծագործական կենտրոն ՀՈԱԿ-ում կատարվել է ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն, ապրանքանյութական արժեքների գնման, մուտքագրման և դուրս գրման գործունեությունը, գնումների գործընթացը, դրամարկղայինն գործունեությունը, աշխատավարձերի հաշվարկման ու վճարման ճշտությունը, գործավարությունը:
Արձանագրվել է, որ ուսումնական նյութերը խմբավարներին բաց է թողնվել առանց բաշխման ցուցակի և առանց ստացողի ստորագրության, սաների կողմից կատարված ավարտական աշխատանքները չեն հաշվառվում, դրանց դուրս գրումները կատարվում են տարերայնորեն:
Հրամաններում չի նշվել հղումները ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդվածներից:

3. Արվեստի դպրոց ՀՈԱԿ-ում կատարվել է հատկացված բյուջետային միջոցների և ծախսերի վերլուծություն, ստուգվել է ծնողական միջոցների գանձման և մուծման ճշտությունը, գնումների գործընթացի կազմակերպումը, աշխատանքային կարգապահությունը, հաշվապահական հաշվառման դրվածքը:
Արձանագրվել են, որ 2009 թվականից չի հաշվարկվել հիմնական միջոցների ու գույքի մաշվածությունը, հրամաններում չկան հղումներ աշխատանքային օրենսգրքի հոդվածներից:

4. Քաղաքապետարանի աշխատակազմում տեղական հարկերի և տուրքերի հավաքագրման ուղղությամբ ուսումնասիրվել և կատարվել են հետևյալ աշխատանքները՝
կատարվել է հարկերի հավաքագրումն ապահովող փաստաթղթերի ընդունում և հանձնում, հաշվառվել են ստացած և մարված անդորագրերը, գանձված և մուծված գումարների ճշտությունը, տեղական տուրքերի գրանցման, հաշվառման և գանձման դրվածքը:
Պարզվել է, որ տեղական հարկերը հավաքագրող նախկին աշխատողի մոտ առկա է գանձած գումարների մնացորդ՝ 15122 դրամի չափով, որը ստուգման պահին ամբողջությամբ մուծվել է բանկ՝ քաղաքապետարանի հաշվին:
Տեղական տուրքերի մասով՝ գործող առևտրի 3 օբեկտներ ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար հայտ չեն ներկայացրել և չեն մուծել տեղական տուրքեր,սակայն նրանց պարտքերը ամրագրված են հաշվետվություններում և աշխատանքներ են տարվում գանձումներն ապահովելու ուղղությամբ: Տեղական տուրք չի գանձվում տաքսի ծառայություններից: Առևտրի և սպասարկումների օբյեկտներում ստուգումներ չեն անցկացվել:

5 Թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ում ուսումնասիրվել է մանկապարտեզի ընդհանուր վիճակը, հաստատված հաստիքացուցակի, տարիֆիկացիայի և ծախսերի նախահաշվի առկայությունը, կրթադաստիարակչական գործունեության կազմակերպումը նախադպրոցական կրթական ծրագրերի առկայությունը և երեխաների խնամքի ապահովումը, կատարվել է ակտիվների և պարտավորությունների գույքագրում, ստուգվել է աշխատավարձերի ու անաշխատունակության թերթիկներով վճարվող նպաստների հաշվարկման ու վճարման ճշտությունը, ապրանքանյութական արժեքների և սննդամթերքների հաշվառման վիճակը, վերլուծվել է ֆինանսատնտեսական գործունեությունը, երեխաների ծնողական վճարների գանձման և մուծման ճշտությունը, դրամարկղային գործունեությունը կադրերի հետ տարվող աշխատանքները:
Արձանագրվել են տեխնիկական խախտումներ ճաշացանկերում, օրինակ մեկ երեխայի հաշվով դուրս գրվող յուղի քանակը 5 գրամի փոխարեն նշվել է 0.5 գրամ, սակայն հաշվարկը կատարվել է ճիշտ՝ 5 գրամով և նմանատիպ այլ թերություններ: Մանկավարժների արձակուրդը, կապված հունվարի սկզբի տոնական օրերի հետ, 25 օրվա փոխարեն տրվել է 20 օր, չնայած որ, այն կատարվել է քաղաքապետի գիտությամբ:

6. Թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ում ուսումնասիրվել է մանկապարտեզի ընդհանուր վիճակը, հաստատված հաստիքացուցակի, տարիֆիկացիայի, ծախսերի նախահաշվի առկայությունը, ուսումնասիրվել է կրթադաստիարակչական գործունեության կազմակերպումը, նախադպրոցական կրթական ծրագրի առկայությունը և երեխաների խնամքի ապահովումը, գույքագրվել է ակտիվները և պարտավորությունները, աշխատավարձերի և անաշխատունակության թերթիկներով վճարվող նպաստների հաշվարկման ու վճարման ճշտությունը, ապրանքանյութական արժեքների և սննդամթերքի մուտքագրման և դուրս գրման ճշտությունը, երեխաների ծնողական միջոցների գանձման և մուծման ճշտությունը, դրամարկղային գործունեությունը, հրամանագրքերի լրացման կարգը և կադրերի հետ տարվող աշխատանքները:
Այստեղ նույնպես ճաշացանկերում թույլ են տրվել նմանատիպ թերություններ ու խախտումներ, ինչ արձանագրվել է թիվ 1 մանկապարտեզում: Երեխեների անձնական գործերում բացակայել են ծնողների դիմումները: Պայմանագրերում հստակ չի ձևակերպվել ծնողական վճարների և ամսական հաճախած օրերի պարտադիր չափը:

7. Կենտրոնական գրադարան ՀՈԱԿ-ում կատարվել է ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն, ստուգվել է հաստիքացուցակի և ծախսերի նախահաշվի առկայությունը, անցկացվել է ակտիվների և պարտավորությունների գույքագրում, ուսումնասիրվել է ապրանքանյութական արժեքների գնման և ներքին շարժի փաստաթղթավորումը, հաշվապահական հաշվառման դրվածքը և հաշվետվությունների արժանահավատությունը, ստուգվել է դրամարկղային գործունեությունը, հրամանագրքերի ճիշտ վարման և կադրերի հետ տարվող աշխատանքները:
ՈՒսումնասիրություններից պարզվել է, որ չի հաշվարկվել հիմնական միջոցների մաշվածությունը: Գրադարանի կանոնադրությամբ սահմանված խորհուրդը ձևավորված չէ: Դրամական գործարքները դեռևս կատարվում է կանխիկ եղանակով, դեռևս չեն օգտվում բանկային քարտերից:

8. Մշակույթի կենտրոն ՀՈԱԿ-ում կատարվել է ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն, ստուգվել է հաստատված հաստիքացուցակի և ծախսերի նախահաշվի առկայությունը, անցկացվել է ակտիվների և պարտավորությունների գույքագրում, ապրանքանյութական արժեքների գնումների և ներքին շարժի փաստաթղթավորում, հաշվապահական հաշվառման դրվածքը և հաշվետվությունների արժանահավատությունը, դրամարկղային գործունեությունը, իրավա-կազմակերպական գործունեությունը և կադրերի գործը:
Պարզվել է հետևյալը՝ ծախսերի ֆինանսավորումը ամբողջությամբ կատարվում է համայնքի բյուջեի հաշվին, համապատասխան աշխատանք չի տարվում վճարովի խմբերի, վճարովի համերգների ու թատերական ներկայացումների միջոցով արտաբյուջետային միջոցների ձևավորման ուղղությամբ:
Չի հաշվարկվել հիմնական միջոցների ու գույքի մաշվածությունը, իսկ հաշվեկշռային արժեքները չի վերագնահատվել և մնացել է նախկին չնչին գներով:
Բացակայում են գեղարվեստական խորհուրդի նիստերի արձանագրությունները:

9. Կոմունալ ծառայություն ՀՈԱԿ-ում ստուգվել է հաստիքացուցակների և ծախսերի նախահաշվի առկայությունը, վերլուծվել է ֆինանսատնտեսական գործունեությունը, աշխատողին աշխատանքի ընդունման և ազատման դրվածքը, իրավա-կազմակերպական գործունեությունը, կատարվել է ակտիվների և պարտավորությունների գույքագրում, ստուգվել է ապրանքանյութական արժեքների ներքին շարժի փաստաթղթավորումը, աշխատավարձերի և անաշխատունակության թերթիկների, նպաստների հաշվարկման ու վճարման ճշտությունը, դրամարկղայինն գործունեությունը:
Քաղաքապետի հանձնարարությամբ կատարվել են լրացուցիչ ստուգումներ՝ կատարված աշխատանքների ուղղությամբ կազմված կատարողական ակտերի ճշտությունը, նյութական արժեքների դուրս գրման և խոտանման վիճակը, դիզ. վառելիքիքի, գազի, պահեստամասերի մուտքագրման, օգտագործման և դուրս գրման հաշվառման և հսկողության դրվածքը, ուսումնասիրվել և վերլուծվել է աղբահանության պայմանագրերի կնքման ուղղությամ գործունեությունը:
Ստուգումից և ուսումնասիրություններից արձանագրվել են հետևյալները՝
Շարքից դուրս եկած նյութական արժեքների թափման համար չի ստեղծվել թափման հանձնաժողով, չի կազմվել թափման ակտ: Գազով աշխատող ավտոմեքենաների ուղեգրերում չի նշվել վազքի սկզբնական և վերջնական ցուցմունքները և չի որոշվել մեկ խմ գազով կատարվելիք վազքի նորման:
Գործնեության մեկ տարվա ընթացքում աղբահանության պայմանագրեր է կնքել շուրջ 1150 ընտանիք ների հետ, որը կազմում առկա բնակչության շուրջ 70 %, աշխատանքներ են տարվում դրանց քանակի ավելացման ուղղությամբ:
Աղբահանության վճարների հավաքագրման տարեկան պլանը կատարվել է 91 %-ով:

Ապարանիի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից կատարված ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքները ներկայացվել են քաղաքապետին, նրա կողմից կատարվել են քննարկումներ, գնահատական է տրվել յուրաքանչյուրի գործունեությանը և տրվել համապատասխան հանձնարարականներ բացահայտված թերությունների և բացթողումների վերացման, հետագայում դրանք բացառելու ուղղությամբ:
Քաղաքապետի հանձնարարությամբ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի կողմից ուսումնասիրվել են աուդիտի ընթացքում բացահայտումների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքների ընթացքը, որից պարզվել է , որ արձանագրված թերությունները, բացթողումներն ու խախտումները հիմնականում շտկվել և կարգավորվել են:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝
Ռ. Հարությունյան

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Քոչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.apara.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԱՊՐԻԼԻ 2014 Թ N 19 - Ա

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 16-րդ հոդվածի 20-դ կետի պահանջներին համապատասխան՝ Ապարանիքաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել Ապարանի քաղաքապետին՝ դասական աճուրդ-վաճառքով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող 2181 քմ հողատարածք:
2. Հաստատել հողատարածքի օտարման մեկնարկային գինը և հավելաճի քայլը՝

N	Հասցեն	Ծածկագիր	Հողատեսքը	Մակերեսը	Մեկնարկային գինը	Հավելաճի քայլը	Գործառնական նշանակությունը
1	Բաղրամյան 64/6	-0138-0090	Բնակ.այլ	960	960000	50000	Հասարակական
2	Բաղրամյան 87/3	-0142-0015	Բնակ.այլ	762	762000	40000	Հասարակական
3	Բաղրամյան 4/9	-0049-0057	Բնակ.այլ	70	105000	5500	Հասարակական
4	Տոնոյան 1փ, 1/3	-0057-0006	Բնակ.այլ	254	127000	7000	Հասարակական
5	Տոնոյան 1փ, 1/2	-0056-0010	Բնակ.այլ	135	67500	4000	Հասարակական

3. Քաղաքապետին՝ ապահովել աճուրդ վաճառքի հրապարակայնությունը, անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ տանել աճուրդը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու:

ԱՎԱԳԱՆԻ՝ *Կողմ՝ (6)* *Դեմ՝(0)* *Ձեռնապահ՝(0)*

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արկադի Կարապետյան
Արսեն Պողոսյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.apara.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԱՊՐԻԼԻ 2014 Թ N 20 - Ա

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԱՆՀԱՅՏ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՈՒՆՈՎ ՀԱՇՎԱՌՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-4-րդ կետերի դրույթներով, նկատի ունենալով, որ հողերի քարտեզագրման ընթացքում Ապարան քաղաքի Բաղրամյան 2/7 հասցեում գտնվող 525 քմ բնակավայրի բնակելի հողամասը հաշվառվել է անհայտ քաղաքացու անվամբ և այն ամրագրվել է հողային հաշվեկշռում, ուստի համաձայն <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 28.1 և 32-րդ հոդվածի 23.1 կետերի պահանջների՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. **Ապարան քաղաքի Բաղրամյան 2/7 հասցեում գտնվող և անհայտ քաղաքացու անվամբ հաշվառված 525 քմ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:**
2. **Քաղաքապետին՝ նշված հողամասը ներառել համայնքի հողային հաշվեկշռում՝ կատարելով համապատասխան փոփոխություն և ապահովել հողամասի պետական գրանցումը:**

ԱՎԱԳԱՆԻ՝	*Կողմ՝ (6)*	*Դեմ՝(0)*	*Ձեռնապահ՝(0)*
	Նվարդ Բարսեղյան		
	Վարդան Բարսեղյան		
	Արկադի Կարապետյան		
	Արսեն Պողոսյան		
	Հովհաննես Շահբազյան		
	Հայկ Շմավոնյան		

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.apara.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԱՊՐԻԼԻ 2014 Թ N 21 - Ա

ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՖՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ քաղաքացի Ֆրիկ Հովհաննիսյանը վճարել է հողի հարկի ապառքի գումարն ամբողջությամբ և դիմել ու խնդրել է զիջել տույժը 14709 դրամի չափով:
Ուստի հաշվի առնելով քաղաքացի Ֆրիկ Հովհաննիսյանի տնտեսական ծանր պայմանները՝ համաձայն «Հողի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջների.

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Զիջել քաղաքացի Ֆրիկ Հովհաննիսյանի հողի հարկի տույժը 14709 դրամի չափով:

ԱՎԱԳԱՆԻ՝ Կողմ՝ (6) Դեմ՝(0) Ձեռնապահ՝(0)

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արկադի Կարապետյան
Արսեն Պողոսյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
Ա Պ Ա Ր Ա Ն Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.apara.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԱՊՐԻԼԻ 2014 Թ N 22 - Ա

ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՄՈՒԽԱՅԵԼ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ քաղաքացի Մուխայել Բարսեղյանը ամբողջությամբ վճարել է հողի հարկի ապառքի գումարը և դիմել ու խնդրել է զիջել տույժը 17832 դրամի չափով:

ՈՒստի, հաշվի առնելով քաղաքացի Մուխայել Բարսեղյանի ընտանիքի սոցիալական վիճակը, համաձայն «Հողի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջների.

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Հարգել Մուխայել Բարսեղյանի դիմումը և զիջել հողի հարկի տույժը 17832 դրամի չափով:

ԱՎԱԳԱՆԻ՝ Կողմ՝ (6) Դեմ՝(0) Ձեռնապահ՝(0)

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արկադի Կարապետյան
Արսեն Պողոսյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.apara.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԱՊՐԻԼԻ 2014 Թ N 23 - Ա

ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԴԱՎԻԹ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քանի որ քաղաքացի Դավիթ Մկրտչյանը վճարել է հողի հարկի ապառքի գումարն ամբողջությամբ և խնդրել է զիջել առաջացած տույժը 9105 դրամի չափով:
Ուստի, հաշվի առնելով նրա ընտանիքի սոցիալական վիճակը, համաձայն «Հողի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջների.

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Զիջել քաղաքացի Դավիթ Մկրտչյանի հողի հարկի տույժը 9105 դրամի չափով:

ԱՎԱԳԱՆԻ՝ Կողմ՝ (6) Դեմ՝(0) Ձեռնապահ՝(0)

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արկադի Կարապետյան
Արսեն Պողոսյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.apara.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԱՊՐԻԼԻ 2014 Թ N 24 - Ա

ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԵՐԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ քաղաքացի Գևորգ Պողոսյանը ամբողջությամբ վճարել է հողի հարկի և գույքահարկի գծով ապառքները և խնդրել է զիջել հողի հարկի տույժը 24421 դրամի և գույքահարկի տույժը՝ 28659 դրամ, ուստի հաշվի առնելով նրա ընտանիքի տնտեսական պայմաններն ու սոցիալապես վիճակը, համաձայն «Հողի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և «Գույկահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջների.

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Զիջել քաղաքացի Գևորգ Պողոսյանի հողի հարկի տույժը 24421 դրամի և գույքահարկի տույժը 28659 դրամի չափով:

ԱՎԱԳԱՆԻ՝ Կողմ՝ (6) Դեմ՝(0) Ձեռնապահ՝(0)

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արկադի Կարապետյան
Արսեն Պողոսյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.apara.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԱՊՐԻԼԻ 2014 Թ N 25 - Ա

ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԼԵՎԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Լևիկ Հակոբյանի ԳԱՋ 2410 ավտոմեքենան վթարի պատճառով 2011թ. չի շահագործվել և խոտանումը սահմանված կարգով ժամանակին չկատարելու պատճառով առաջացել է 28379 դրամի ապառք և տույժ, ուստի հաշվի առնելով նրա ընտանիքի սոցիալապես վատ պայմանները, համաձայն «Գույկահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջների.

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Ձիջել Ապարան քաղաքի բնակիչ Լևիկ Աղասու Հակոբյանի ավտոմեքենայի գույքահարկը 28379 դրամի չափով, որից ապառք՝ 20766 դրամ, տույժը՝ 7613 դրամ:

ԱՎԱԳԱՆԻ՝ Կողմ՝ (6) Դեմ՝(0) Ձեռնապահ՝(0)

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արկադի Կարապետյան
Արսեն Պողոսյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.apara.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԱՊՐԻԼԻ 2014 Թ N 26 - Ա

**ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՍԵՎԱԿ ՂԱԶԱՐՅԱՆԻ
ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նկատի ունենալով, որ Սևակ Ղազարյանի ԳԱԶ 2410 ավտոմեքենան վթարի պատճառով 2012թ. չի շահագործվել և խոտանումը սահմանված կարգով ժամանակին չկատարելու պատճառով առաջացել է 12252 դրամի ապառք և տույժ, ուստի հաշվի առնելով նրա ընտանիքի սոցիալապես վատ պայմանները, համաձայն «Գույկահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջների.

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Զիջել քաղաքացի Սևակ Ղազարյանի ավտոմեքենայի գույքահարկը՝ 12252 դրամ, որից ապառք՝ 7917 դրամ, տույժ՝ 4335 դրամ:

ԱՎԱԳԱՆԻ՝ Կողմ՝ (6) Դեմ՝(0) Ձեռնապահ՝(0)

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արկադի Կարապետյան
Արսեն Պողոսյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.apara.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԱՊՐԻԼԻ 2014 Թ N 27 - Ա

ԳՈՒՅՔԻ ԽՈՏԱՆՄԱՆ ԵՎ ԴՈՒՐՍ ԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16/29 և 46 – րդ հոդվածների պահանջների, հիմք ընդունելով Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Ապարանի քաղաքային համայնքի արվեստի դպրոց ՀՈԱԿ հաշվեկշռում գտնվող թրծման վառարանը խոտանել և դուրս գրել:
2. Քաղաքապետին՝ ապահովել գույքի դուրս գրման և խոտանման փաստաթղթերի ձևակերպումը:

ԱՎԱԳԱՆԻ՝ Կողմ՝ (6) Դեմ՝(0) Ձեռնապահ՝(0)

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արկադի Կարապետյան
Արսեն Պողոսյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան